



Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց

26 ապրիլի 2012 թվականի N 16

36. «ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 7 ՀԱՎԵԼՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐԸ՝ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼ, ՄԱՅԻՍ ԵՎ ՀՈՒՆԻՍ ԱՄԻՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունել ի գիտություն, որ՝

1. 2011 թվականի դեկտեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված և 2012 թվականի ապրիլի 1-ից ուժի մեջ մտած՝ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-314-Ն օրենքում (այսուհետ՝ օրենք) 2012 թվականի ապրիլ, մայիս և հունիս ամիսների համար արտոնագրային վճար վճարելու ժամկետների առումով կարգավորումներ տրված չեն: Մասնավորապես, օրենքի՝

1) 5-րդ հոդվածով լրացված՝ N 8 հավելվածի 16-րդ կետի համաձայն, արտոնագրային վճար վճարողներն արտոնագրային վճարը վճարում են մինչև արտոնագիր ստանալը.

2) 6-րդ հոդվածի համաձայն՝

ա. օրենքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի ապրիլի 1-ից, ինչը նշանակում է, որ մինչև օրենքն ուժի մեջ մտնելն արտոնագրային վճարը վճարվել չի կարող,

բ. օրենքն ուժի մեջ մտնելու պահից հետո՝ 30 օրվա ընթացքում, օրենքով սահմանված գործունեության տեսակներ իրականացնողները հարկային մարմին են ներկա-

յացնում հայտարարություն՝ արտոնագրային վճար վճարող համարվելու մասին, սակայն անցումային դրույթներով 2012 թվականի ապրիլ, մայիս և հունիս ամիսների համար արտոնագրային վճարների վճարման ժամկետ չի սահմանվում:

2. «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 7 հավելվածի 1-ին կետով սահմանված գործունեության տեսակների համար նախատեսված արտոնագրային վճարը 2012 թվականի ապրիլ, մայիս և հունիս եռամսյա ժամանակահատվածի համար կարող է վճարվել մինչև 2012 թվականի հունիսի 1-ը ներառյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

2012 թ. մայիսի 2
Երևան

